Հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի

Պատասխաններ-9-րդ դասարան

1. Բյուրական գնալու ճանապարհին՝ քո դիմաց՝ հանդիպակաց ***բարձունքին,*** վեր է խոյանում հինավուրց մի ամրոց, որ ասես սիգապանծ հայացքով դիտում է շրջակայքը: Ամբերդն է՝ հայ ճարտարվեստի գլուխգործոցներից մեկը. բերդաքաղաքը կառուցվել է այնտեղ, որտեղ միանում են Արքաշեն և Ամբերդ գետերը: Այն ունի խաչաձև հատակագիծ, վերևում՝ հովհարաձև ***տանիք:*** Դարպասից ներս մտնելիս երևում են շինություններ՝ իրենց սենյակներով՝ յուրաքանչյուրն իր բաղնիքով և ընդհատակյա ջեռուցման համակարգով:

Առեղծված է դարերի հոլովույթի մեջ բարձրադիր այս ***կառույցի***՝ մինչ օրս կանգուն լինելը:

Պեղումներից հայտնաբերվել են գետնուղիներ, որոնցով ամրոցի բնակիչները դուրս են եկել դեպի մոտակա կիրճը:

Ամբերդը ժամանակին ռազմական կարևոր ***հենակետ*** էր: Երբ տասնմեկերորդ դարում սելջուկները գրավեցին բերդաքաղաքը, այն վերածվեց զորակայանի, իսկ կառույցն ամբողջովին ավերակվեց Լենկթեմուրի կողմից, ով աշխարհին հայտնի է իր չար գործերով:

Ճիշտ է, այսօր էլ կանգնած է Ամբերդը՝ գլուխը մխրճած ամպերի մեջ, և ներքևից ***նայողին*** թվում է, թե մշուշի մեջ կորած մտացածին տեսիլք է իր առջև, սակայն երբեմնի աշխույժ կյանքով ապրող ամրոցում, ցավոք, այժմ լսվում է միայն բուերի կռինչը:

2. **բարձունքին**-բացահայտիչ, **տանիք**- ուղիղ խնդիր, **կառույցի**- հատկացուցիչ, **հենակետ**-ստորոգելի, **նայողին**- հանգման խնդիր
3. անորոշ դերբայ- **Բյուրական գնալու**-որոշիչ, **մինչ օրս կանգուն լինելը**- ենթակա
հարակատար- **գլուխը մխրճած ամպերի մեջ, մշուշի մեջ կորած**- որոշիչ
ենթակայ.-**ներքևից նայողին**-հանգման խնդիր, **երբեմնի աշխույժ կյանքով ապրող**-որոշիչ
համակատար-**դարպասից ներս մտնելիս**- ժամանակի պարագա,
4. **որ**- ենթ., **որտեղ**-տեղի պարագա, **որոնցով**-միջոցի խնդիր, **երբ**- ժամ. պարագա, **ով**- ենթ.
5.<u>տասն</u>+<u>մեկ</u>+<u>երորդ</u>, <u>շրջ(շուրջ)</u>+ա+<u>կայ</u>+<u>ք</u>, <u>հատ</u>+<u>ակ</u>+ա+<u>գիծ</u>, <u>արև</u>+<u>ել</u>+<u>յան</u>, <u>զոր</u>+ա+<u>կայ</u>+<u>ան</u>
6. *առյուծ կտրել*- խիզախանալ,կտրիճանալ,
բառերը քամուն տալ- շատախոսել, շաղակրատել, շաղփաղփել,
բուրդը քամուն տալ-1. ծեծել, խոշտանգել, տանջել, 2. խիստ քննադատել,
կոտր ընկնել- սնանկանալ,
կուրծք ծեծել-1.երդվել, հավատացնել 2.ողբալ, կոծել
7. **խոչակ**- կոկորդ, կերակրափող, որկոր, **կերոն**- մեծ մոմ, ջահ, **հեղգ**- ծույլ, ալարկոտ, պղերգ, **շաղակրատել**- շատախոսել, դատարկաբանել, անիմաստ բաներ ասել, **մավի**- բաց կապույտ, երկնագույն
8. թեթևասահ-ծանրաքայլ, կորովի-թույլ, մտացածին-իրական, թեժ- մարմանդ,
վեհանձն-փոքրոգի:

Գնահատման չափանիշներ- 9-րդ դասարան

Ամբողջ հարցաշարին տրվում է 50 միավոր, որից՝
1. Բնագրի ճիշտ կետադրության համար տրվում է 6 միավոր:
   Յուրաքանչյուր կետադրական ոչ ճիշտ նշանի համար հանվում է 1 միավոր:
2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 5 միավոր:
3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 4 միավոր:
Եթե շարահյուսական պաշտոնը սխալ է նշված, միավոր չի տրվում:
4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 5 միավոր:
Եթե շարահյուսական պաշտոնը սխալ է նշված, միավոր չի տրվում:
5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 5 միավոր:
Եթե արմատը կամ ածանցը ճիշտ ընդգծված չէ, միավոր չի տրվում:
6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 5 միավոր:
7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 5 միավոր:
8. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 5 միավոր:
9. Շարադրության համար տրվում է 10 միավոր:

Բոլոր առաջադրանքների ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1 միավոր, կետադրականի համար՝ 0,5 միավոր, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր:

Յուրաքանչյուր առաջադրանքի ավել գրած սխալ պատասխանի համար հանվում է 1-ական միավոր: